ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10

03 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2021թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 6 անդամներ:

Բացակա էին՝ Ավագ Ավագյանը, Մեխակ Մեխակյանը, Վարդան Սամսոնյանը, Էդիկ Տիգրանյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Մարոզ Սարիբեկյան, Սիլվա Գրիգորյան, Սուսաննա Աբրահամյան, Անուշ Գարսեվանյան, Գուհարիկ Ազիզյան, Հասմիկ Մելքումյան, Լուսինե Զոբանյան, Մանիշակ Հովհաննիսյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Հունան Ռուբենյանը

Նիստը արձանագրում էր գլխավոր մասնագետ՝ Սիլվա Գրիգորյանը

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 3-Ի ԹԻՎ 10 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 17-րդ հոդվածի համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայքի ավագանու 2021 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 10 արտահերթ նիստի օրակարգը

1. <<ԿՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/08>> ծածկագրով գնման մրցույթը չկայացած հայտարարելու վերաբերյալ

2. Հողհատկացում կատարելու վերաբերյալ

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 53/

Լսեցին
<<ԿՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/08>> ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

/Զեկ. ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ/

Համաձայն <<Գնումների մասին>> օրենքի 37-րդ հոդվածի, համայնքի ավագանին որոշում է.

1. <<ԿՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/08>> ծածկագրով <<Ակունք համայնքի Սևաբերդ բնակավայրի ջրամատակարարման համակարգի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման>> գնման մրցույթը հայտարարել չկայացած, քանի որ դադարել է գոյություն ունենալ գնման պահանջ:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 54/

Լսեցին
ՀՈՂՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը, համայնքի ավագանին որոշում է՝

1. Անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով ծածկագիր՝ 07-027-0017-0021, հասցեն՝ գ. Զառ, Կենտրոնական փողոց 22/1 անշարժ գույքը հատկացնել Ակունք համայնքի Զառ բնակավայրում արևային ֆոտովոլտային կայաններ տեղադրելու նպատակով:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 55/

Լսեցին
ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՐԱՖՖԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետի,«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, հիմք ընդունելով «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» դրական եզրակացությունները, ներկայացված հայտերը, համայնքի ավագանին որոշում է՝

1.Փոխել հողամասերի նպատակային նշանակությունը համաձայն հավելվածի:

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 56/

Ավագանու անդամներ

ՍԱՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՂՎԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ

ԳՈՌ ՄԿՐՏՉՅԱՆ

ԱՐՍԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Միլվա Գրիգորյանը